Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12–Ի «ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔՎՈՏԱՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՒ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

Մաքսային միության 2008 թվականի դեկտեմբերի 12–ի «Սակագնային քվոտաներ կիրառելու պայմանների եւ մեխանիզմի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 10–րդ հոդվածին համապատասխան,

հիմնվելով Եվրասիական տնտեսական կոմիտեի մասին 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի վրա,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ՝

Հոդված 1

Համաձայնագրում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1. 3 –րդ հոդվածի 1–ին կետում «Մաքսային միության հանձնաժողովը» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական հանձնաժողովը» բառերով,

2. 4–րդ հոդվածի 1 –ին կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ՝

«1. Հանձնաժողովը սակագնային քվոտայի ծավալը Կողմ հանդիսացող պետությունների միջեւ բաշխում է Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետությունում արտադրության եւ սպառման ծավալների այն տարբերության սահմաններում, որը հաշվի էր առնվել միասնական մաքսային տարածքի համար սակագնային քվոտայի ծավալը հաշվարկելիս՝ սույն Համաձայնագրի 3–րդ հոդվածին համապատասխան: Ընդ որում, Հանձնաժողովի որոշման համաձայն, Հանձնաժողովը կամ Կողմերը սահմանում են արտաքին առեւտրային գործունեության մասնակիցների միջեւ սակագնային քվոտան բաշխելու մեթոդը եւ կարգը, ինչպես նաեւ, անհրաժեշտության դեպքում, բաշխում են սակագնային քվոտան երրորդ

երկրների միջեւ:»:

Հոդված 2

Կողմերի միջեւ սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են Համաձայնագրով սահմանված կարգով:

Հոդված 3

Սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ մտնում ավանդապահի կողմից՝ դիվանագիտական ուղիներով Կողմերի կողմից ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից, որոնք անհրաժեշտ են սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2013 թվականի հունիսի 21–ին, մեկ բնօրինակով, ռուսերեն լեզվով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահպանվում է Եվրասիական տնտեսական կոմիտեում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կուղարկի իր հաստատված օրինակը:

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից	**Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից**	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից**